

տուն և կիզեց այրեց հազարէ աւելի մարդ:

1786ին կը յիշուին նոր Ջուղայեցի ազնուատունմ Մանիշարեանք, որոցմէ հասած են դրասէր մարդիկ:

1789ին Պուլխի մէջ տեղի ունեցաւ սոսկալի տեղաւտարափ մը, զոր այսպէս կը նկարագրէ՝ ժամանակին ոճովն՝ Հ. Ղուկաս Ինճիճեան Մխիթարեանը:

«Այս տարի Ստանպօլ մէկ ալեկոծեալ տարի մը եղաւ. երկընթէն մէկ հեղեղ (սէլ) մը եկավ որ շիկար ծեր մը անանկ սաստիկ անձրեւ յիշօղ. երկու օր անձրեւային եղաւ, բայց մէջը մէկ անձրեւ մը եկաւ ժամ ու կէս քշօղ անանկ շատ որ լման պզտիկ ջրհեղեղ մը երեւցավ մեզի. Ստամպօլին համբաները անանկ բարձրացան ջրով որ տեղ տեղ մարդիկ չի կրցան անցնիլ, տեղ տեղ ալ անանկ խորունկ փորեց որ՝ գետնի տակէն հնուցմէ մնացած գերեզմանի քարեր երեւան հանեց. Գասըմ փաշան տուներ՝ տէիբմէնի քարեր քակեց ծովը տարաւ: Պօղազ իշիին ան գեղերը որ ձորի (տէրէի) մէջ են՝ տուներուն բարձերը ֆըշիները սեղանները և այլն ծովը քշեց տարաւ. Խանտիլիին ջուրի համբուն մէջը քշելով խօթելով կով մը՝ անանկ հրելով ծովը տարաւ, տեղ տեղ ալ ան համբուն ամուր պատերը պատուեց որ սուղան Մուրատէն են շինուած. Պէպէքին ձորին մէջը ծառեր քշելով իրարու վրայ դիզելով մէկ պատուար (պէնտ) մը շինեց, ու ծառերուն վրայ ջուրը արգիլուելով բարձրացաւ, բարձրութենէն վար վազելով ջուրին սաստկութիւնը ինչ հոռմի գերեզմանի քարեր որ կային՝ ծովեզերքը քշեց տարաւ, տուներ փլուց, լեռան հողը վար բերելով շարշին հողով լեցուց. խանութները վարը խորունկը մնացին, սոխախները խուլածի չափ խանութներէն բարձր մնացին: Կէօքսուլին ամմէն պարտէզներէն որ 4 ժամ ներսէ ներս կը քէ՛ իրենց ամմէն բերքը ծովը քշեց տարաւ. Չէնկէլ գեղին ծովածոցը լեցված կերեւնար քշված կանանչեղէնով, տրներէն հանած բարձերով: Ամմէն մէկ տեղին պատահարները ինչ որ տեսանք աս սոսկալի անձրեւին սաստկութենէն եղած՝

1. Դարապատում հատ. Ե. 1789-1795 էջ 11-12: